



PEARLS OF ARMENIAN HERITAGE

Պերճ Պոռշեանց (1837 – 1907)

Խաչատուր Աբովեանի հետեւող վիպագիր է Պերճ Պոռշեանց: Ծնած է Աշտարակ գիւղը եւ աշակերտած էջմիածնի ժառանգաւորաց եւ ապա Թիֆլիսի Ներսէսեան վարժարաններուն:

Ուսուցիչ եղած է Թիֆլիս, Շուշի, Երեւան, Աստրախան, եւ Ագուլիս: Այսպիսով առիթ ունեցած է ճանչնալու հայ ժողովրդական բարբերը, եւ ապրումները, որոնց արձագանգը տուած է իր վէպերուն մէջ:

1887–1898 հայերէն լեզուն ամանդած է Ներսէսեան վարժարանին մէջ: Մեռած է Պաքուի մէջ, եւ թաղուած Թիֆլիսի Խոջիվանքի գերեզմանատան մէջ:

Ղազարոս Աղայեան իր ինքնակենսագրութեան մէջ կը խօսի Պոռշեանցի մասին եւ կը նկարագրէ զայն որպէս պարզամիտ ու բնական մարդ, որ չէր յարգեր կենցաղավարական պատշաճութիւնները, ազնիւ ձեւ մը՝ ըսելու համար որ կոշտ մէկն էր:

Վէպերն են՝ *Սօս եւ Վարդիթեր* (1860), որուն նիւթը առնուած է Աշտարակի կեանքէն, եւ առաջին գործն ըլլալով՝ շատ մօտ նմանութիւն ունի Աբովեանի վէպին:

Յաջորդ 18 տարիներուն աւելի փորձ ու զարգացում ստանալէ ետք՝ կը հրատարակէ *Կռուածաղիկ* (1878), *Հացի Խնդիր* (1880), եւ *Շահէն* (1883) վէպերը, նոյնպէս առնուած Աշտարակի կեանքէն: Վերջին շրջանի վէպերը եղան *Յեցեր* (1889), *Բղդէ* (1890), *Սկիզբն Երկանց* (1892), *Յունօն* (1900):

Պոռշեանցի նպատակը եղած է իր վէպերով արձանագրել գլխաւորապէս իր ճանչցած հայուն ազգագրական տուեալները. տեղական սովորութիւններուն նկարագրութիւններով ծանրաբեռնուած են իր վէպերը, թէեւ ամենեւին զուրկ չեն գործողութենէ եւ շարժումէ:

Սովորաբար նոյն պարունակութիւնը ունին իր վէպերը. գեղջուկ միջավայր, սիրահարական դէպքեր, զոհեր, կաշառակեր ու դրամասէր անձեր՝ որոնք կը կեղեքեն բարի տիպարները, բայց չկան ուժեղ տիպարներ, տեսարաններու ներշնչեալ նկարագրութիւններ, հոգեբանական կնճիռներ եւ վերլուծումներ:

(Թաղուած Հ. Մեսրոպ Վրդ. Ճանաչեանի “Հայ Գրականութեան Նոր Շրջանի Համառօտ Պատմութիւն” հատորէն)

